Պարոն/Տիկին Ա. Մաֆարյանին

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա.Մաֆարյան

«23» 09 2024թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող **հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Մաֆարյանին**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը-Մոմջյան Մարիամ.

2. Զբաղեցրած Կաշտոնը-ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ.

3. Գործուղման վայրը և ժամկետները- Ավստրիա, քաղաք Վիեննա, 2024 թվականի սեպտեմբերի 15-ից 18-ը.

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում)- ԵՄ էներգետիկ համայնքի կարգավորողների կոմիտե.

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). ԵՄ էներգետիկ համայնքի կարգավորողների կոմիտեին կից գազի աշխատանքային խմբի 61-րդ հանդիպմանը և Գազի 19-րդ ֆորումին մասնակցություն:

Էներգետիկ համայնքը կարգավորող կոմիտեին կից կից գազի աշխատանքային խմբի հանդիպմանը (16.09.2024թ.) քննարկվեցին ԵՄ էներգետիկ համայնքում գազի բնագավառի վերջին զարգացումները, ԵՄ էներգետիկ համայնքի հաստատած ժամանակացույցով նախատեսված՝ բնական գազի մեծածախ շուկայի մոնիթորինգի և թափանցիկության վերլուծության զեկույցների ընթացքը, տեղեկատվության հավաքագրման առկա խնդիրները, ինչպես նաև ԵՄ էներգետիկ համայնքում գազի ցանցի հասանելիության առկա խոչընդոտները և ժամանակացույցով նախատեսված այլ աշխատանքների ընթացքը: Այնուհետև, քննարկվեց բնական գազի փոխադրման սակագների ձևավորման և միասնական մոտեցումների ներդրման ընթացքը էներգետիկ համայնքի անդամ երկրներում, ինչպես նաև մասնակից երկների կողմից բիոգազը գազամատակարման գործող ենթակառուցվածքներում օգտագործելու հնարավորությունների վերաբերյալ վերլուծական զեկույցը:

Մանրամասն ներկայացվեցին ԵՄ էներգետիկ համայնքի անդամ երկրներում բնական գազի համակարգերի փոխկապակցմանն բարելավման ուղղությամբ երկրների ձեռնարկած միջոցառումների ընթացքը, ինչպես նաև միջպետական համագործակցությանն ուղղված միջոցառումների առաջընթացը:

Առանձնակի ուշադրության արժանացան Մոլդովայի կողմից էներգետիկ համայնքի շրջանակում ստանձնած պարտավորությունների ընթացքի վերլուծությունը, մասնավորապես ՌԴ-ից բնական գազի մատակարարումների դադարեցման ազդեցությունը բնական գազի սակագների փոփոխության վրա, ինչպես նաև Մոլդովայի բնական գազի փոխադրողի սերտիֆիկացման հետ կապված խոչընդոտների վերացմանն ուղղված միջոցառուները:

Էներգետիկ համայնքի պայմանագրային երկրներից Սերբիայի ներկայացուցիչներն էլ մանրամասն ներկայացրեցին բնական գազի փոխադրման սակագների կանոնների կիրառման ընթացքը և դրա արդյունքում բնական գազի փոխադրման սակագների փոփոխությունը՝ ուղղված արդարացի գնագոյացմանը:

Այնուհետև, Էներգետիկ համայնքի քարտուղարության ներկայացուցիչը ներկայացրեց բնական գազի ոլորտում էներգետիկ համայնքում իրականացված աշխատանքների ընթացքը, ընդունված որոշումները: Ապա քննարկվեցին Էներգետիկ համայնքի կարգավորող կոմիտեին կից գազի աշխատանքային խմբի համար հետաքրքրություն ներկայացնող այլ թեմաներ: Մասնավորապես, առանձնակի ուշադրության արժանացան ԵՄ էներգետիկ համայնքի երկրներում սակագնային նպատակով կիրառվող բնական գազի միավորի (խորանարդ մետր, կՎտժ) ընտրության և կիրառման հիմնահարցերը (տեխնիկական, իրավական և այլն) և հաստատվեց հաջորդ հանդիպման օրակարգում ներառվող հարցերի նախնական շրջանակը:

Բնական գազի 19-րդ ֆորումին քննարկվեցին բնական գազի ոլորտում ԵՄ էներգետիկ համայնքի անդամ երկրների մատակարարման անվտանգության բարձրացման ուղղված աշխատանքները, ԵՄ էներգետիկ համայքնի երկրներում կատարված օրենսդրական փոփոխությունները, սակագների ձևավորման սկզբունքների կիրառման, ձմռան ամիսներին երկրների պատրաստվածությանը վերաբերող հարցեր, մասնավորապես պահուստավորման նորմատիվների ապահովման ընթացքը երկրներում, նախատեսված միջոցառումները, մեթան գազի արտանետումների հետևանքների մեղմման հարցում բնական գազի արդյունաբերության դերն ու նշանակությունը, անհետաձգելի միջոցառումների անհրաժեշտությունը, նոր գազատարների և երկրների

գազամատակարարման համակարգերի փոխկապակցման բարելավմանն ուղղված ներդրումային ենթակառուցվածքների կառուցման ընթացքը:

6. Քննարկված թեմաները (հարցերը). բարձրացման հիմնախնդիրները և երկրների կողմից ձեռնարկված միջոցառումներ, բնական գազի ոլորտի արտանետումների կրճատման հիմնախնդիրներ:

Ինչպես ԵՄ էներգետիկ համայնքի կարգավորողների կոմիտեին կից գազի աշխատանքային խմբի 61-րդ հանդիպմանը, այնպես էլ Գազի 19-րդ ֆորումին մանրամասն ներկայացվեցին Մոլդովայի և Սերբիայի էներգետիկ համայնքի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման առաջընթացը, որը հիմք է ստեղծում հետագա բարեփոխումների համար առաջիկա երկու տարիների ընթացքում: Նշվեց, որ քարտուղարությունը հավատարիմ է մնում Մոլդովային՝ բնական գազի փոխադրողի սերտիֆիկացման պայմաններին համապատասխանելուն աջակցելու և մատչելի գազի ապահովման հարցում:

Ֆորումի շրջանակում ներկայացվեցին պայմանագրային կողմերի կողմից կարգավորման ընթացակարգերի բարելավման աշխատանքները՝ ուղղված գազի շուկաների բարելավմանը: Առանձնակի ուշադրության արժանացան կարգավորող մարմինների կողմից հաղորդման ցանցի սակագների թափանցիկ ձևավորմանը և հանրային լսումների իրականացմանն ուղղված միջոցառումները՝ հատկապես գազամատակարարման հասանելի ենթակառուցվածքների օգտագործումը բարձրացնելու համար: Ընդգծվեց Սերբիայի ազգային փոխադրողի վաղաժամկետ սերտիֆիկացումը և երկրի առաջընթացը՝ սակագնային մեթոդաբանություններին համապատասխանեցնելու գործում:

Ուշադրության արժանացավ Բուլղարիա Սերբիա բնական գազի փոխկապակցման ծրագիրը՝ կողմերի միջև հետագա կոմերցիոն գործունեության ակտիվացման համար և Սերբիայի բնական գազի պահեստավորողի հավաստագրումը ԵՄ կանոնակարգերին համապատասխան:

Ֆորումին ներկայացվեց նաև Ուկրաինայում բիոմեթանի արտադրության փորձնական նախագծերը և երկրից բիոմեթանի արտահանման սահմանափակումների վերացման ուղղությամբ աշխատանքները:

Ֆորումին կրկին ընդգծվեց գազի ոլորտում ածխաթթվայնացման Եվրոպայի 2013թ-ից ստանձնած հանձնառությունը: Ներկայացվեցին վերջերս ընդունված ջրածնի և ածխաթթվային գազի, ներառյալ մեթանի, շուկայի փաթեթը, գազի ոլորտի համար նշված փաթեթով նախատեսված արտանետումների հետ կապված կարգավորումները:

7. Հանդիպումները, ելույթները.–Աշխատանքային խմբի հանդիպմանը հանդես եմ եկել ելույթով՝ ՀՀ բնական գազի ոլորտում վերջին զարգացումները թեմայով:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.–Բնական գազի խմբի 61-րդ հանդիպման վերջում քննարկվեցին կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող հարցերը, որոնք ի թիվս այլ հարցերի, պետք է քննարկվեն հաջորդ հանդիպման ընթացքում: Մասնավորապես, բնական գազի ոլորտում ԵՄ դիրեկտիվների կիրառման և օրենսդրության ներդաշնակեցման ուղղությամբ աշխատանքների ընթացքը, բնական գազի ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները, փոխկապակցման վերացմանը առնչվող և այլ հարցեր, իսկ գազի 19-րդ ֆորումի արդյունքներով հրապարակված հաշվետվությունը հասանելի է file:///C:/Users/Mariam%20Momjyan/Downloads/conclusions_19thGasForum_17092024.pdf հասցեով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Հաշվի առնելով բնական գազի ոլորտում ԵՄ էներգետիկ համայնքի անդամ երկրների ներկայիս գործընթացները ինչպես նաև բիոգազը գազամատակարման գործող ենթակառուցվածքներում օգտագործելու հնարավորությունների վերաբերյալ վերլուծական զեկույցը՝ ԵՄ էներգետիկ համայնքի անդամ երկրների փորձը կարող է օգտակար լինել ՀՀ էներգետիկայի բնագավառի հետագա բարեփոխումների համար:

Գործուղվող ---------- 23 սեպտեմբերի 2024թ

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 832-ԳՔ, 14.08.2024թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ **Մարիամ Մոմջյան,**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Վիեննա / Ավստրիա /**

5. Գործուղման ժամկետները **15.09.2024-18.09.2024թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝
(*թվարկել՝* **ճանապարհածախս, գիշերավարձ,** օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝
(*թվարկել՝* ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված

Ծախսի տեսակը		*Մարիամ Մոմջյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)	141	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	60,278.9	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	241,116	241.116
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		241.116	241.116

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)
Ամսաթիվ

19.09.2024թ.